ՄԻԱՅՆ ԳՐԱՎԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՉԵՍ ԿՇՏԱՆԱ

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ** ՍԻՄ-ի «Ազդակ» ակումբում լրագրողներին հավաստիացրեց, որ նախորդ տարիների համեմատ այսօր երիտասարդ գիտնականների արտահոսքը նվազել է. **«Երիտասարդներն այսօր տարբեր հնարավորություններ ունեն իրենց ուսումը շարունակելու արտասահմանյան առաջատար գիտական կրթական համակարգերում, գիտեք, որ ստեղծված է «Լույս» հիմնադրամը, որը նույնպես ստեղծված է նրանց աջակցելու համար: Բայց հիմա ընհանրապես գիտնականների արտահոսքը կանխելու համար շատ բան կախված է եւ մեզանից, եւ կառավարությունից: Մենք պետք է նրանց աշխատանքը դարձնենք գրավիչ, որպեսզի երիտասարդը այդ աշխատանքով զբաղվի: Եթե այն տաղտկալի է, անհետաքրքիր է, ապա նա հաստատ իր երիտասարդ տարիները չի նվիրի գիտությանը: Բայց գրավիչ աշխատանքով չես կշտանա, դրա համար պետք է ապահովված լինի նաեւ նրա սոցիալական խնդիրները: Որովհետեւ գիտությամբ զբաղվողի գլխում եթե այլ շատ տարբեր հոգսեր կան, բնականաբար նա չի կարող կենտրոնանալ»:** Ըստ բանախոսի, մյուս կողմից էլ՝ այսօր իջել է մեր գիտական աշխատողի վարկը. հասարակությունը այսօր նրանց չի գնահատում, ժամանակին գիտական աշխատողը լուրջ հեղինակություն ուներ եւ տվյալ ընտանիքի պարծանքն էր, բայց հիմա նույն ընտանիքում կարող է 10 գիտության թեկնածու լինի, բայց պարծանքի առարկա չդառնա: Դրա համար մենք պետք է ստեղծված իրավիճակը հաղթահարենք, ընդգծում է Ռ. Մարտիրոսյանը եւ շեշտը դնելով հանրային գիտակցության բարձրացման վրա՝ նշում. **«այսօրվա երիտասարդը պետք է գա հետաքրքրվի, որպեսզի մենք նրա համար կարողանանք պայմաններ ստեղծել»:**

Իսկ այն հարցին, թե ինչքանով են ճիշտ օգտագործվում գիտության համար տրամադրված գումարները, եւ արդյո՞ք այսօր լուրջ ուշադրություն է դարձվում գիտնականների որակավորման գործընթացի վրա, մանավանդ որ կարծիք կա, թե կուսակցական պատկանելությունից ելնելով են գիտնականներին այս կամ այն կերպ «վերաբերվում» ապա, **«ես չգիտեմ այդպիսի մի գիտնականի, որը կուսակցական ճանապարհով առաջընթաց է ունեցել: Ո՞րն է այդ կուսակցությունը, որն իր շարքերում ուզում է գիտնականներ ունենալ: Այն, որ շատ պաշտոնյաներ դառնում են գիտության թեկնածուներ եւ դոկտորներ, անշուշտ այդ երեւույթը կա բայց մենք չենք կարող մերժել այն մարդկանց, որոնք որ ժամանակ, դիրք եւ փորձ ունեն, եւ որոնք համատեղում են գիտական աշխատանքը վարչականի հետ: Բայց ճշմարտությունն այն է, որ դրանց թիվը շատ է»:**

ԳԱՅԱՆԵ ԶԱՐԳԱՐՅԱՆ